«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ կողմից նախատեսվող Գեղանուշի պոչամբարի նախագծի փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2-րդ հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

13.12.2023թ. **ք. Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Կապանի մշակույթի կենտրոնի շենքում 2023 թվականի դեկտեմբերի 6-ին, ժամը 12:30-ին տեղի ունեցավ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ կողմից նախատեսվող Գեղանուշի պոչամբարի նախագծի փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2-րդ հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյանը, «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ հանրային կապերի մենեջեր՝ Արփինե Հարությունյանը, բնապահպանության բաժնի մենեջեր՝ Աիդա Ալեքսանյանը, «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ այլ աշխատակիցներ, «Ակունք-Ֆիրմա» ՍՊԸ տնօրեն՝ Հովհաննես Նիկողոսյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև հասարակական կազմակերպության անդամներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Առավոտ» օրաթերթի 2023 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 208 (6980) համարում, ինչպես նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքերի հայտարարությունների բաժնում (www.env.am, www.kapan.am): Հանրային քննարկման վերաբերյալ դիտողություններ կամ առաջարկություններ չեն ստացվել:

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյանին:

Զեկույց (Հովիկ Մեսրոպյան) – Շրջակա միջավայրի նախարարության փորձաքննական կենտրոն նախնական գնահատման հայտ է ներկայացվել Գեղանուշի պոչամբարի նախագծի փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ: Նախ ուզում եմ կրկին անգամ տեղեկացնեմ, որ այսօրվա հանրային քննարկման վերաբերյալ տպագրվել է «Առավոտ» օրաթերթում: Բացի «Առավոտ» օրաթերթից տեղադրվել է նաև Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքէջում և ծանուցվել է Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանին՝ այսօրվա հանրային քննարկումն իրականացնելու վերաբերյալ: Ինչպես նշեցի, Շրջակա միջավայրի նախարարության փորձաքննական կենտրոն հայտ էր ներկայացվել Գեղանուշի պոչամբարի նախագծի փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը, ուզում եմ տեղեկացնել, որ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ Գեղանուշի պոչամբարը նախագծվել է «Մեխանոբր» նախագծային ինստիտուտի կողմից (ք. Լենինգրադ): Շահագործման է հանձնվել 1962թ. և գործել է մինչև 1983թ: 1984թ-ից Կապանի հարստացուցիչ ֆաբրիկայի պոչերը սկսեցին տեղափոխվել Արծվանիկի պոչամբար: 2006թ-ից «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ կողմից մշակվեց նոր նախագիծ՝ պոչամբարների վերաբերյալ: Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել գործող պոչամբարի նախագծում կատարել փոփոխություն: Գեղանուշի պոչամբարի նախագծային ծավալը կազմում է 11.73 մլն մ^3: Մինչ այս պահը դեռևս նախնական գնահատման հայտը գտնվում է փորձաքննության փուլում: Փորձաքննական գործընթացին մասնակցել են Շրջակա միջավայրի նախարարության բոլոր ստորաբաժանումները, բնության հատուկ պահպանվող տարածքները, անտառային կոմիտեն, անտառային քաղաքականության վարչությունը, մթնոլորտային օդի, վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչությունները: Բացի շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, փորձաքննությանը մասնակցել են նաև առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի նախարարությունները, ինչպես նաև կադաստրի կոմիտեն և Սյունիքի մարզպետարանը: Ստացված բոլոր դիտողություններն ու առաջարկություններն ուղարկվել են ընկերությանը: Ընկերությունը պատշաճ լրամշակումն իրականացրել է և ներկայացրել փորձաքննության, ուստի այսօր մենք իրականացնում ենք 2-րդ հանրային քննարկումը: Ես կխնդրեի պարոն Նիկողոսյանին ներկայացնի նախագծի վերաբերյալ:

Զեկույց (Հովհաննես Նիկողոսյան) – Շնորհակալություն: Ինչո՞ւմ է կայանում գործը և ինչո՞ւ է նպատակ եղել այս նախագծում կատարել որոշակի փոփոխություն: 2006թ.-ի նախագծով ծավալը նախատեսվել է 77 մլն 730, այսօր մենք 7մլն լցրել ենք ունենք մոտ 4մլն 350 կուբամետր տեղ, բայց քանի որ 2006թ - ից շահագործվում է պոչամբարը, որոշվեց որոշել

նրա կայունությունը: Այսինքն՝ նախատեսվում է 2 փուլով 10 10 մետր բարձրացնել, այսինքն 20մ բարձրացնել և հասնել 851 նիշի: Դրա համար, որ մենք համոզված լինենք, որ պատնեշների կայունությունը կապահովվի, հետազոտություններ է կատարվել: Վերցվեցին նմուշներ, ֆիզիկամեխանիկական հատկություններ արին, դրանց և լցակույտերի և 4 տարբեր մեթոդներով հաշվարկներ է իրականացվել պոչամբարի պատնեշների կայունությունը, ոչ թե միայն կայունությունը, այլ և երկրաշարժների ժամանակ նրանց դիմակայունությունը: Հաշվարկն արվել է ըստ միջազգային ստանդարտների 435 տարվա համար և արվել է 10 000 տարվա համար: Առավելագույն հնարավոր ազդեցությունը երկրաշարժերի 0.4g է՝ հորիզոնական տատանումների դեմ, թեկուզ միջինն ընդունված է 0.13-0.35-ի սահմաններում, սակայն նախագիծը արվել է հիմնվելով առավելագույն երկրաշարժի վրա: Դա էլ կլինի 0.4 g տատանումներ՝ հորիզոնական: Կարող է այժմյան վիճակը բավարարում է դեռ, բայց բարձրացնելով՝ անվտանգությունն ապահովելու համար 20մ որոշեցին ամրապնդել: Որոշեցին սարքել հենապատ՝ մեր դատարկ ապարներով: Այս դեպքում կարծես 2 նապաստակ ենք սպանում: Առաջինը նա է, որ մենք ամրացնում ենք պոչամբարի կայունությունը, եթե նաև գործակիցը 1 է դարձնում ենք 1.2, 1,34՝ հեղուկի դեպքում և երկրորդը՝ մենք կարողանում ենք հին թափոններից՝ լցակույտերից, որը գիտեք բավականին շատ են Խալաջի ափերում, դրանք օգտագործել այստեղ՝ պոչամբարում և այն տարածքը, որտեղ զբաղեցնում են լցակույտերը՝ այդ տարածքը մաքրել, մաքրազատել թափոններից: Այժմ ի՞նչ ենք նախատեսել հակավթարային վիճակներում: Պատնեշների վրա ըստ երկարության կենզոչափեր են տեղադրվելու, որտեղ ամեն հերթափոխի պոչամբարի պետք է չափվեն ջրի մակարդակը կենզոչափերում և գրանցվեն: Բարձր տատանումների ժամանակ տարվեն ընթացիկ միջոցառումներ: Բացի այդ տեղադրվելու են ռեպերներ, որը ցույց է տալու նստեցումը, եթե նստեցում կա, թե չկա պատնեշի: Այսինքն, հակավթարայինները որոնք ГОСТ-ով նախատեսված են պոչամբարների համար տվյալ դեպքում կկիրառվեն: Մյուսը նույնպես ուզում եմ նշեմ, քանի որ ամեն բարձրությունը 2.5մ է լինելու պատնեշի՝ առաջին փուլը 10մ ենք բարձրանալու, ամեն 2.5մ բարձրանալուց պատնեշը ենթարկվելու է ռեկուլտիվացիայի: Այսինքն ոչ թե սպասելու ենք լրիվ պոչամբարը լցվի վերջացնի նոր ռեկուլտիվացիա արվի, այլ ամեն պատնեշ 2.5մ բարձրացնելուն զուգահեռ արվելու է ռեկուլտիվացիա: Վերջնական ռեկուլտիվացիան արվելու է միայն պոչամբարի մակերեսային հատվածում: Այս դեպքում նախատեսված է 2 տեսակի ռեկուլտիվացիա դա մեխանիկական կամ լեռնատեխնիկական ռեկուլտիվացիան է, որը նախատեսվում է պոչամբարի մակերեսը հարթեցնել, ծածկել հատուկ նյութերով, որը կամրացնի մակերեսը, վրեն կփռվի դատարկ ապարներից կամ ինչպես մեզ այստեղ ցանկություն հայտնեցին խիճերից՝ 50-60սմ և վերև

20-25սմ բերրի հողը կծածկվի, որը հանվել է այն ժամանակ, երբ պոչամբարը կսկսեն ամրացնել, այսինքն հիմնապատի տարածքից հանված հողերը և բուսածածկ կարվի: Սա վերջնական ռեկուլտիվացիան կլինի, որը ըստ օրենքի արվում է 2 տարի առաջ՝ արվում է առանձին նախագիծ և անցնում է նույն փորձաքննությունը: Մնացած կառույցները շրջանառու ջրի համակարգը, պոչատարը ոչ մի փոփոխության չեն ենթարկվի: Նրանք մնում են նույնը: Գեղանուշի պոչամբարը արտահոսք չի ունենում, այսինքն ջրի արտադրական կեղտաջրերի արտահոսք դեպի Գեղանուշ գետը տեղի չի ունենում: Ամբողջ ջուրը վերադառնում է հարստացուցիչ ֆաբրիկա՝ որպես երկրորդական ջուր: Հիմնականում սա է, եթե հարցեր ունեք կպատասխանեմ:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Շնորհակալություն պարոն Նիկողոսյան: Նախ սկսենք ներկաներից՝ հարցեր կա՞ն: Ներկայացեք և Ձեր հարցը:

Հարց (Արմեն Գևորգյան) – «Իրավատեր կապանցիներ» ԲՀԿ ՝ Գևորգյան Արմեն: Պարոն Նիկողոսյան նախ մինչև պատնեշին անդրադառնալը վերջին Ձեր խոսքում նշեցիք, որ արտահոսք առհասարակ չկա Գեղանուշի պոչամբարից: Բազմիցս մեր կազմակերպության անդամներով նշել ենք, ֆիքսել ենք նաև, տեղադրել, որ որոշակի արտահոսք այնուամենայնիվ նկատվում է պոչամբարի պատնեշի տարբեր հատվածներում: Նախ կուզենայինք իմանալ ի՞նչ միջոցներ է ձեռնարկվում այդ ջրերի արտահոսքը կանգնացնելու՝ նոր անդրադառնանք նախագծի փոփոխություններին:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Ես ասացի արտանետում, ջրերի արտահոսք չկա: Ձեր ասածը դա ներծծում է, այսինքն ջուրը ներծծվել է պատնեշից և ինչ-որ տեղեր տեսել եք դուրս է եկել: Դա կարող է լինել այն դեպքում, երբ ջրհորները՝ ջրհորները իրենցից ներկայացնում են 1մետր 20 սմ խողովակաշար, շախմատաձև ունի 100մմ -անոց անցքեր, որոնք փակվում ենք՝ պոչամբարի մակարդակի բարձրանալուց հետո դրանք փակվում են, այսինքն պարզեցված ջուրը հեռացվում է, կարող է լինել դեպքեր, եթե խցանումը նորմալ արած չլինեն այդտեղից ինչ-որ բացթողում լինի: Բայց դա արտահոսք չի, դա արտածծվել է: Տվյալ նախագծով այդ դեպքերի համար մենք ունենք դրենաժային համակարգ, որոնք ջրերը հավաքվելու են և վերադառնան պոչամբար: Դրա համար այս նախագիծը անում ենք, որ Ձեր ասած բոլոր թերությունները հաշվի առնենք և վերացնենք: Եթե դուք գիտեք ինչ որ դիտողություններ ու թերություն կան ասեք, մենք մեծ հաճույքով կվերացնենք:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ, կա՞ն այլ հարցեր, խնդրեմ:

Հարց (Սասուն Մանուկյան) – Ես ներկայացնում եմ Կապանի անտառտնտեսությունը: Քանի որ ենթադրում եմ, որ այս նախագիծը կազմվել է նախկին սեփականատերերի ժամանակաշրջանում ու նախաձեռնվել է այդ փուլում և հայտնի է, որ հոկտեմբերի սկզբին,

ավելի ճիշտ վերջնական գրանցումը հոկտեմբերի 6-ին է եղել, նոր սեփականատեր ունենք, նոր կապիտալով, որը ողջունում ենք: Ուստի չեմ ուզում պատեհապաշտ լինել և այն հարցերը, որոնք կան քննարկման առարկա են կքննարկենք գործընկերների հետ և երրորդ, չորրորդ քննարկման ժամանակ մենք մեր վերջնական դիրքորոշումը կհայտնենք: Այժմ այսքանը:

Լրացում (Հովհաննես Նիկողոսյան) – Նախ հիմնական նախագիծն արվել է 2006թ -ին, որը եղել է նույնպես Լեռնամետալուրգիական կոմբինատ: Մյուս նախագիծն, որն հիմա է կազմվում պլանի փոփոխություն չունի, դա միայն տիտղոսաթերթի վրա կփոխվի, բայց այս նախագիծը և տնօրինության փոփոխությունը նախագծի փոփոխության վրա չեն կարող ազդել: Շնորհակալություն:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ: Պարոն Նիկողոսյան, ինչպես նախորդ հանրային լսման ժամանակ մենք ներկայացրեցինք որոշ առաջարկություններ, իհարկե մենք տեսանք, որ որոշակի լրացումներ կատարվել են՝ հաշվի առնելով մեր առաջարկությունները, սակայն մեկ, երկու հարցի վերաբերյալ կուզենայի անդրադառնալ: Խոսքը վերաբերում է պոչամբարի ռեկուլտիվացմանը, և նախագծով նախատեսվում է մշակման մակերեսի վրա ստեղծել 40-50 սմ դրենաժային շերտ՝ խոշոր խճից և դատարկ ապարներից: Խճի տարբերակը մեր առաջարկն էր, բայց կցանկանայի այստեղ հստակեցնեք և ֆիքսեք, որպեսզի խիճը ոչ պակաս լինի 30սմ, որովհետև այստեղ չի հստակեցվում, թե որքան է: Եվ երկրորդ առաջարկը կապված ռեկուլտիվացիայի հետ, մենք առաջարկել էինք հողի դրենաժային շերտը սահմանել 50սմ-ից ոչ պակաս: Խնդրում եմ սա էլ նկատի ունեցեք՝ հետագայում բուսականության հետ կապված խնդիրներ չունենալու համար:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Առաջինը ես խնդիր չեմ դնում խճի հետ կապված, ինչ վերաբերում է բերրի շերտի վերաբերյալ ՝ այդ խորության միջինը 25 սմ է եղել տարածքից հանելու: Եթե մեզ Հայաստանում չի թույլատրվում հող վաճառել, եթե մեզ կտաք ինչ-որ տեղ հող՝ կամ հող պետք է լցնենք կամ բերենք տորֆի ու քարփիչի խառնուրդը վաճառվում է դա կարող ենք բերենք լցնել: Բայց բերրի շերտ մենք ունենք այդ 25սմ, որը այդ տարածքից հանվել է, որը մեզ տվել են, սա է բարդությունը:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Այսինքն խնդիրը կապված է տվյալ հատվածից 25սմ բերրի հողի հետ, իսկ 50սմ ռեկուլտիվացիայի իրականացման հետ կապված խնդիր չեք տեսնում:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Եթե խոտաբույս ենք մենք դնելու, այսինքն թփուտներ, ծառեր չենք անում, որովհետև եթե մենք անենք կարող է արմատները քայքայեն անցնեն դրենաժային շերտը և հասնեն անմիջապես պոչամբարին ու քայքայեն այդ շերտը:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ: Հաջորդ հանրային լսմանը մենք ավելի հստակ կարծիքներ կհայտնենք, եթե հողի խնդիրն է՝ լուծում կառաջարկենք կամ մեկ այլ առաջարկ

կանենք: Եվ երկրորդ նկատառումը մենք բարձրաձայնել էինք կապված ջրահեռացման թունելի հետ՝ անվտանգության հետ, իհարկե մենք տեսանք, որ նաև նախատեսվում է, ինչպես 2017թ «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ կողմից իրականացված տեսողական, գործիքային և լաբորատոր հետազոտությունների արդյունքում ի հայտ եկած թերությունների վերացման միջոցառումներ իրականացնել, այնպես էլ նախատեսում ենք նաև ուսումնասիրություններ ներկա վիճակի և անվտանգության նկատառումներից ելնելով միջոցառումներ իրականացնել: Ճի՞շտ է:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Այո, մենք շին. սերտիֆիկատն արդեն պայմանավորվել ենք, պետք է կցել պայմանագիր, որ գան տեղում ուսումնասիրեն և մեզ ասեն ինչ միջոցառումներ պետք է անենք: Սակայն այս փոփոխությունները որ եղավ, հետաձգվեց, այժմ այս խոսակցությունները նոր տնօրինության հետ պետք է արվի:

Լրացում (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ: Այստեղ նշվում է 2017թ. «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ – ի հետազոտություն և նշվում է, որ անհրաժեշտ է լրացուցիչ ուսումնասիրություն: Եվ եկենք հստակեցնենք և կարծում եմ, որ անհրաժեշտություն կա նախատեսել մասնագիտական ուսումնասիրություն՝ թունելի ներկա վիճակի և անվտանգության վերաբերյալ և վերացնել մասնագիտական ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկած բոլոր թերությունները:

Լրացում (Հարություն Թամազյան) – Ընկերության ներկայացուցիչ: Ուրեմն մենք ներկա պահին ունենք ուսումնասիրության հայտը, բանավոր արդեն ունենք, որ իրենք Լեռնամետալուրգիայի հետ պայմանավորված են եղել, այս ամենին ընթացք են տվել և մեզ տեղեկացրեցին, որ դրական եզրակացությամբ շահագործան պիտանի է, բայց գրավոր եզրակացությունը մոտ ժամանակներս կունենանք և մենք առանձին կներկայացնենք Ձեզ, որպեսզի դուք ևս համոզվեք, որ թունելը գտնվում է աշխատանքային վիճակում: Մինչ հանրային լսումը ես տեղեկացել եմ, որ գործընթացը ընթացքի մեջ է:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ Պարոն Թամազյան, իմ ասելիքը հենց դա է, որ անհրաժեշտ է ուսումնասիրություն, որի արդյունքների հիման վրա կիրականացնենք համապատասխան միջոցառումներ:

Լրացում (Հովհաննես Նիկողոսյան) – Նախագծում նշված է դա:

Խոսք (Հովիկ Մեսրոպյան) – Ինչպես նշեցի նախատեսվող գործունեությունը իրականացվում է երկու փուլով՝ նախնական գնահատման և հիմնական գնահատման փուլեր: Հիմա մենք այս հանրային քննարկումից հետո համայնքի կողմից դրական եզրակացությունից՝ կարծիքից հետո Շրջակա միջավայրի նախարարության փորձաքննական կենտրոնի կողմից ընկերությանը կտրվի տեխնիկական առաջադրանք, որի

հիման վրա կկազմվի ՇՄԱԳ հաշվետվությունը և կներկայացվի փորձաքննության: Այդ ընթացքում կիրականացվի նաև ևս երկու հանրային քննարկում՝ երրորդը կիրականացվի համայնք և ընկերություն, իսկ չորրորդն արդեն համայնք, Շրջակա միջավայրի նախարարության փորձաքննական կենտրոնը, ի դեպ ընկերության մասնակցությամբ և ընկերությանը կտրվի համապատասխանաբար պետական փորձաքննական եզրակացություն: Շնորհակալություն:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ: Կա՞ն հարցեր: Ներկայացեք:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Արթուր Մովսիսյան Կապանի ազատ քաղաքացի: Ես ազատ քաղաքացի շեշտեցի նրա համար, որ նաև ընդգրկեմ ժողովրդավարական մթնոլորտը: Նախ շնորհակալ եմ Կապանի համայնքապետարանից, համայնքի համայնքապետից և «Իրավատեր կապանցիներ» բնապահպանապան կազմակերպության մեր ընկերներից, որոնք այսօր ինձ հրավիրել են: Եվ շատ ուրախ եմ, որ մեր մայրաքաղաքից եկած հյուրերը նստել և մեր հետ քննարկում են մեր մոտ առաջացած ծայրահեղ ճակատագրական խնդիրը: Ես չեմ մանրամասնում հիմա, թե ինչ ի նկատի ունեմ, որովհետև այստեղ կան նաև հատուկ խոսակցություններ, որոնք մանրամասնել պետք չէ: Ուրեմն ես մեկ առաջարկ ունեմ: Քանի որ հիմա շատ գեղեցիկ մթնոլորտ է, քանի որ հայկական կապիտալի մասին եք խոսում արդեն, որ հայկական կապիտալն էլ է Կապանի կոմբինատում, ես առաջարկում եմ այս հարցերի շուրջը տրամադրվել իբրև մեկ ընտանիքի հարցի քննարկում: Այսինքն՝ պետական, ազգային մեկ ընտանիք ենք, այդ ընտանիքի շրջանակներում մենք կարող ենք իրար նկատմամբ հարցեր ունենալ, չհամաձայնվել, բայց վերջնականում պետք է գանք մեկ ընդհանուր հայտարարի, որ այս ամենը ունենա և՛ սոցիալական էֆեկտ, և՛ տնտեսական էֆեկտ, ինչու չէ նաև բնապահպանական խոշորագույն էկոլոգիական պրոբլեմ է կապված մեր լեռնաարտադրական համալիրի գործունեության հետ: Ի՞նչ եմ առաջարկում: Որեմն Կապանի համայնքապետին առաջարկում եմ ձևավորել մասնագիտական հանձնախումբ, որտեղ մայրաքաղաքից եկած մեր ընկերները ծանոթանան մեր մասնագիտական պոտենցիալին քաղաքում: Մենք ունենք առաջարկներ ինչպես շտկել: Ինչ վերաբերում է Կապանի Գեղանուշի պոչամբարին՝ բավականին լուրջ հարցեր կան և այդ լուրջ հարցերը հանրայնացնել հնարավոր չէ: Մենք նեղ, այսպես ասած քննարկենք, և դրա առաջարկներին կտանք ինչպես անել, ոնց անել: Այստեղ մեր պարոն վարչապետը կարծեմ մեկ անգամ ասեց մեզ անհրաժեշտ են մեգա պռոեկտներ, ասե՞ց չէ մի անգամ: Ուրեմն Կապանում հնարավոր է իրագործել մեկ խոշորագույն մեգա պրոեկտ, լցապատման աշխատանքներ սկսել, միջշտոկվերտային հատվածներում՝ Կավարտ գյուղում կարող է մի օր լցվի ներքև, հարցեր կան: Այդ պոչամբարի եղածը տանեն վերև աշխարհում պրակտիկա կա չէ: Մենք ունենք մասնագետներ

հավաքվենք, քննարկենք: Այս պոչամբարը տանում ենք էնտեղ ասում են откуда взяли туда и тогдали տեղ ինչ խնդիր կա: Այնտեղ վտանգը ոչ միայն երկրաշարժի հետ է կապված վտանգն է: Ես չեմ ուզում առանձնացնեմ: Ժամանակին եկել հաղորդագրությունը տվել եմ պատկան մարմիններին, թե ինչ է տեղի ունեցել և գիտեք ինչ, քանի որ մենք մի ընտանիքով ենք նստած լավ կլիներ, որ այդ Ջաբրայանը Ֆալետտայի հետ միասին այստեղ նստած լինեին: Ես իրենց երեսին անպիսի բաներ կասեի, որ տղաները Կապանից բաց չէին թողնի նրանց: Այդ հայկական ազգանուններով ոչ հայ մարդիկ, մեջները ազգային բան չկա: Ամերիկայում այսպիսի բաներ անեին կմորթեին նրանց: Այն վտանգն, որ այսօր Գեղանուշի պոչամբարն է ներկայացնում, դիմում եմ համայնքապետարանին, չգիտեմ վարչապետը, կառավարությունը չէ այդ պատճառահետևանքային կապերի օրենքները խախտվել են՝ տեխնոլոգիաներով խախտվել են: Եկել են թալանել գնացել: Բերել թափել են հիմա ասում են ազգային կապիտալ: Շատ լավ է, հիմա սկսենք զրոյից: Զրոյից սկսենք ոչ մեկին չտանք, ոչ մեկին չվաճառենք: Քայլ առ քայլ մի քանի տասնյակ միլիարդ դոլլարի այնտեղ հարստություն կա: Լցափակելուց հետո մասնագետներով կհավաքվենք՝ Կապանում աշխատած մարդիկ կան, թեկուզ թոշակառու, կապ չունի: Ես Ձեզ կասեմ որտեղ ինչ կա: Մենակ ոսկին չի, մենակ պղինձը չի, մենակ կապարը չի: Կհավաքվենք կխոսենք՝ առանձին: Եվ պարտադիր չէ, որ սա հանրայնացվի:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ պարոն Մովսիսյան: Կարծում եմ առիթներ կլինեն մասնագիտական քննարկումների, բայց ինչ վերաբերում է բնապահպանական հարցերին և Կապանի համայնքապետարանի հետ համագործակցությանը պետք է նշեմ, որ Կապանի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժինը զբաղվում է նման հիմնախնդիրներով, պարոն Հովակիմյանը հանդիսանում է բաժնի ղեկավարը, որը ոլորտի մասնագետ է և եթե որևէ հարցեր ունենում եք, որ կցանկանաք ներկայացնել կամ առաջարկել, կարող եք պարոն Հովակիմյանի հետ քննարկել:

Լրացում (Արթուր Մովսիսյան) – Ես ներողություն եմ խնդրում: Նախ համայնքապետարանի հետ միասին ես կխնդրեի այս գործին ընդգրկել բոլոր ուժային կառույցների ներկայացուցիչներին: Ես դա խնդրում եմ և առաջարկում և պնդում եմ, որ պետք է լինեն: Կան հարցեր, նորից եմ կրկնում չեմ կարող հիմա հանրայնացնել: Նախկինից եկած հարցեր կան, որոնց կարող է նաև դուք տեղյակ չեք:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Պարոն Մովսիսյան շատ լավ, բայց դա այլ հարթության հարցեր են և երբեմն դուրս են համայնքի լիազորություններից: Միգուցե Ձեր առաջարկները այլ գերատեսչությունների ուղղեք: Համենայն դեպս ընդունեցինք ի գիտություն::

Լրացում (Արթուր Մովսիսյան) – Պարոն Թադևոսյան, եթե սա մեր ազգային անվտանգության խնդրի հետ կապված հարցեր են համայնքապետարանը լիազորություն ունի

թե չունի մենք ժողովրդավարական հասարակություն ենք: Իշխանությունը ժողովրդինն է: Հավաքվենք և քննարկենք ի՞նչ է, ի՞նչ չէ, որտե՞ղ է, ի՞նչ անենք, ի՞նչ չանենք, որ բերենք հասցնենք նորմալ մակարդակի: Վերջըվերջո 21-րդ դարն է մեգա պրոեկտ եմ առաջարկում և այդ պրոեկտի շրջանակներում համայնքապետարանը կունենա միլիոնավոր դոլլարների եկամուտ, մարդիկ միլիարդավոր դոլլարների շահույթ կստանան, աշխատանքային տեղեր կբացվեն մի քանի հարյուր հատ: Հասկանում եք, ես համալիր մոտեցում եմ առաջարկում: Մենք էլ այստեղ գրագետ մարդիկ ենք, տասնյակ տարիներ կրթված մարդիկ կան:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ պարոն Մովսիսյան: Ես Ձեզ ասեցի, որ համայնքապետարանը պատրաստակամ է համագործակցել իր լիազորությունների շրջանակներում՝ տարբեր կառույցների հետ, իսկ նման խնդիրների դեպքում կամ առաջարկությունները կարող եք պարոն Հովակիմյանի միջոցով ներկայացնել և որը համայնքի տիրույթում է գտնվում մենք կարծագանքենք: Այլ հարցեր:

Հարց (Արմեն Գևորգյան) – Պարոն Թադևոսյան, որպես այդպիսին հարց չկա: Պարզապես ուզում ենք, որպեսզի այս նախագծի փոփոխված վիճակի, փոփոխված տարբերակը որտեղից է հասանելի, որտեղից կարող ենք տեսնել, որպեսզի հետագա փոփոխություններին էլ մենք ականատեսը լինենք: Եվս մեկ անգամ կխնդրեի, որպեսզի մեր մատնանշած թերությունները հաշվի առնվեն անվտանգային խնդիրները պահպանելու համար:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Պարոն Գևորգյան հայտարարությանը կցված է նաև նախագիծ, այնպես որ կարող եք այդպես տեղեկանալ:

Խոսք (Հովիկ Մեսրոպյան) – Ուրեմն ես ուզում եմ տեղեկացնեմ, որ սա նախնական գնահատման հայտ է: Հիմնական նախագիծը կներկայացվի Ձեր ուշադրությանը երրորդ հանրային քննարկման ժամանակ՝ մանրամասն: Իսկ սա ընդհամենը նախնական գնահատման հայտ է: Նախագիծը կներկայացվի երրորդ հանրային քննարկման ժամանակ:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ: Պարոն Նիկողոսյան քիչ առաջ, երբ հարց բարձրաձայնվեց ջրերի կուտակման հետ կապված, ենթադրաբար պատվարից եկող և դուք մեկնաբանեցիք, որ դա հնարավոր է լինի ջրերի ներծծման արդյունքում: Արդյո՞ք դա Ձեր մասնագիտական կարծիքն է, ենթադրությունը, թե կա ուսումնասիրություն կոնկրետ այս դեպքի համար:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Ես ճիշտն ասած երեկ եմ եկել, ինձ ասել են և ես բարձրացել նայել եմ: Քանի որ լողափը բավականին մոտիկ չէ, այսինքն լողափի տարածությունը պահում են այնտեղից պետք է լողափից ներծծում չլիներ դեպի պատնեշ:

Հավանական է, առաջին տպավորությունը, որ ես նայել եմ այդտեղից է գնացել ջուրը, բայց ուսումնասիրություն չէ, երեկ եմ եկել նայել եմ ուղղակի մասնագիտական կարծիք է:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ, որպեսզի ամբողջությամբ բոլորին պարզ լինի կառաջարկեմ այս մասով մասնագիտական ուսումնասիրություն կատարել և հստակ նշել, թե այդ ջրերը ինչի արդյունք են, որ նոր ուսումնասիրության արդյունքի հիման վրա՝ եթե անհրաժեշտություն լինի, համապատասխան միջոցառումներ նախատեսվեն:

Լրացում (Արթուր Մովսիսյան) – Նախ ես համաձայն չեմ, որ այնտեղ ջրեր են ներթափանցել: Ասեմ ինչու, որովհետև լեռնային համալիր արդյունաբերությունում աշխատել եմ երկար տարիներ և քաջատեղյակ եմ նաև, թե ինչ է տեղի ունեցել սրանից 30 – 40 տարի առաջ մինչ այսօր: Այնտեղ ուղղակի հետադարձ ջրամատակարարման խողովակը բարձր ճնշումների տակ լինելով մի տեղից ճաք է տվել ու մի տեղից դուրս է գալիս:

Հարց (Հովհաննես Նիկողոսյան) – Շրջանառու ջրի համակա՞րգն ի նկատի ունեք:

Պատասխան (Արթուր Մովսիսյան) – Այո, շրջանառու ջրի համակարգը:

Հարց (Հովհաննես Նիկողոսյան) – Շրջանառու ջրի համակարգը պատնեշի ներծծման հետ ի՞նչ կապ ունի:

Պատասխան (Արթուր Մովսիսյան) – Ինչ ներծծում, այդտեղ ներծծում չկա, պոչամբարից ջուրը ներ է թափանցում դուրս:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Շրջանառու համակարգը ջրհորից ջուրը՝ պարզվածքը, կալեկտորով գնում է մտնում է պոմպակը: Ուրեմն պոչամբարում ջրհորեր է դրված: Ամեն պոչարի բարձրացման հետ՝ թեքության վրա, նոր ջրհոր է դրված: Ջրհորի տակից կալեկտոր է միացված ...

Ավելացում (Արթուր Մովսիսյան) – Ուրեմն խնդրում եմ համայնքապետարանին հաջորդ քննարկման ժամանակ մեկ գրատախտակ բերել ես այնտեղ, վիճաբանություն չէ, պոչամբարի ներսում ջրագունդ է առաջանում: Աշխարհի բոլոր պոչամբարների ներսում ասեմ образуется водяной шар внутри тела водохранилища: Վերևից որ ճնշումը ավելացվում է, մի տեղից պետք է դուրս գա: Այդ դուրս գալու տեղը ամենակարճ տեղը պատվարն է: Չորս կողմը սար է:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Ներողություն, պարոն Մովսիսյան, որպեսզի քննարկումների և ավելորդ խնդիրների չբախվենք, ես սկզբից առաջարկեցի իրականացնել ուսումնասիրություն խնդրի վերաբերյալ և հաջորդ հանրային լսմանը ներկայացնել: Եթե ուսումնասիրության արդյունքում ի հայտ գան թերություններ, ապա նախատեսել նաև տվյալ թերությունների վերացման աշխատանքներ: Եկեք ենթադրություններ չանենք:

Ավելացում (Արթուր Մովսիսյան) – Ես խնդրում եմ ինձ ընդգրկել այդ ուսումնասիրություններում՝ համայնքապետարանի կողմից:

Պատասխան (Գոռ Թադևոսյան) – Համայնքապետարանը չի իրականացնելու պարոն Մովսիսյան: Հարգելի գործընկերներ եթե այլ հարցեր չկան, ապա այսօրվա հանրային քննարկումը համարենք ավարտված: Շնորհակալություն եմ հայտնում բոլորին մասնակցության համար:

<u>Հանրային քննարկման պատասխանատու՝</u>

Կապան համայնքի ղեկավար **Գևորգ Փարսյան**

<u>Ձեռնարկող՝</u>

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ

գլխավոր տնօրեն **Սասուն Ավետիսյան**

<u>Հանրային քննարկման վարող՝</u>

Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ **Գոռ Թադևոսյան**

<u>Հանրային քննարկման արձանագրող՝</u>

Կապանի համայնքապետարանի

գյուղ. և բնապահ. բաժնի առաջատար մասնագետ **Աստղիկ Մկրտչյան**